ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀԿԳՄՍՆՄԱԾՁԲ-22/32

ք. Երևան «11» 04 2022թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը՝ ի դեմս նախարարության գլխավոր բարտուղար Գագիկ Սաֆարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու) մի կողմից և «Աշոտ Բաղդասարյան» Ա/Ձ ն՝ ի դեմս տնօրեն Ա. Բաղդասարյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է իրականացնել հակավիրուսային համակարգչային ծրագրային փաթեթների ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետև՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Բննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը հաստատող փաստաթուղթը և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ:

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 975000 (ինը հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է, նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է, սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրությունը

[illegible]արելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի [illegible]արեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով [illegible]արտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, [illegible]ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է, հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասները այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագիրը գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետի լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի

մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է __4__ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1 և N 2 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Աշոտ Բաղդասարյան» Ա/Ձ
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3	ք. Երևան, Անդրանիկի փ. 123/46 բն.
Կառավարական տուն 2,	«Լվոկաբանկ» ՓԲԸ,
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	Հ/Հ 16600486909400,
Հ/Հ 900011018562	ՀԿՀՀ 28080206
ՀԿՀՀ 02698732	
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
_____ Գ. Սաֆարյան	_____ Ա. Բաղդասարյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

02698732

Հավելված 1
«14» «04» 2022թ կնքված -
թիվ ՀՀԿԳՄՆՄԱԾՁԲ-22/32 գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Չափաբաժնի համարը	Ծառայության						Մատուցման	
	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	Ընդհանուր գինը ՀՀ դրամ,	Ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը
1	48761100/1	հակավիրուսային համակարգչային ծրագրային փաթեթներ	**Հակավիրուսային համակարգչային ծրագրային փաթեթների ծառայության կառավարման համակարգի նկատմամբ պահանջները** Բոլոր պաշտպանվող ռեսուրսների համար կառավարման ծրագրային միջոցները պետք է ապահովվեն հետևյալ գործառնական հնարավորությունները. • հակավիրուսային ծրագրային ապահովման ինտերֆեյսը պետք է աջակցի սենսորային էկրաններին և բարձր լուծմամբ էկրաններին. • անհայտ համակարգիչների հայտնաբերման համար գործիքների առկայություն, որոնք ավտոմատ կերպով որոնում են համակարգիչներ տեղական ցանցում, առանց դրանք ձեռքով որոնելու և ավելացնելու անհրաժեշտության. • SIEM աջակցության մոդուլի առկայությունը; • օպերացիոն համակարգերի կամ ձեռքով ռեժիմում համապատասխան գործակալի տեղադրման փաթեթը ավտոմատ կերպով ընտրելու հնարավորություն, • հաճախորդների համար անվտանգության քաղաքականությունների նարգասրում; • ԱՀ վերագործարկելու անհրաժեշտության բացակայություն հակավիրուսային պաշտպանության կառավարման համակարգը տեղադրելուց հետո; • հակավիրուսային պաշտպանության ծրագրի և հակավիրուսային տվյալների բազաների ավտոմատացված թարմացում, • թարմացումների տրամադրումը օգտատիրոջ աշխատանքային կայաններին դրանք ստանալուց անմիջապես հետո; • Ծրագրային ապահովման և հակավիրուսային տվյալների բազաների թարմացում տարբեր աղբյուրներից՝ ինչպես հաղորդակցման ուղիներով, այնպես էլ տեղեկատվական կրիչների միջոցով; • տեղադրված հակավիրուսային պաշտպանության ծրագրերով աշխատանքում տարի ունեցող իրադարձությունների մասին տեղեկացնելու մեխանիզմ և դրանց վերաբերյալ փոստով ծանուցումների բաշխումը նախմանձելու հնարավորության մասին • անհայտ կոդի նմուշները վերլուծության ուղարկելու ավտոմատ եղանակով կամ ձեռքով փոխանցելու հնարավորություն. • Ընդհանուր խմբերի ստեղծման հնարավորություն, որոնցում ընդհանուր եղանակով կներառվեն հաճախորդների նույնները տվյալ խմբերի պահանջներին	դրամ	975000	1	2022 թ. 2-4-րդ եռամսյակների ընթացքում:	Երևան, ՀՀ ԿԳՄՄՆ Վ. Սարգսյան 3, Կառավարական 2-րդ տուն

համապատասխան,

Լիցենզիաների կառավարման համար հատուկ ծրագրային գործիքի առկայություն: Դրա օգնությամբ կարելի է լիցենզիաներին, ակտիվացված մոդուլներին և լիցենզիաների հետ կապված իրադարձություններին, ինչպիսիք են ժամկետի լրանալը, օգտագործումը և հավաստագրումը: Գործիքի հետ աշխատանքը տարբեր դերերի ներքո՝ որպես լիցենզիայի տիրոջ կամ որպես անվտանգության ադմինիստրատոր:

Հետևյալ գործողությունները կատարելու հնարավորություն.

- դիտարկել լիցենզիայի կարգավիճակը իրական ժամանակում;
- հետևել առանձին սարքերին (և միևնույն ժամանակ անջատել դրանք);
- Կարգավորել լիցենզիայի իրադարձություններին վերաբերող ծանուցումները.
- Միևնույն հաշվին նշանակել բազմաթիվ լիցենզիաներ.
- Կարգավորել ծանուցումները լիցենզիայի կարգավիճակի առավել հարմար դիտանցման համար;
- համաժամացման գործառույթի առկայությունը կենտրոնական կառավարման սերվերի հետ:
- հանգույցների վրա լիցենզիաների ապաակտիվացման հնարավորության առկայություն կառավարման սերվերում առաջադրանքների ստեղծման միջոցով:
- Վերլուծության բարձր արագություն. 5 րոպեի ընթացքում տրամադրել անհայտ նմուշների 90% -ի վերլուծություն
- Կասկածելի ֆայլերը ձեռքով կամ ավտոմատ կերպով ուղարկելու հնարավորության առկայություն ՝ քաղաքականության կոնֆիգուրացիայի հիման վրա:
- Անվտանգության կենտրոնի վեբ վահանակից կամ ակտիվացված ծառայության միջոցով հաճախորդի համակարգիչներից ֆայլերը ձեռքով ուղարկելու հնարավորություն,
- Անվտանգության ապահովման կենտրոնի API միջոցով ծառայության գործողությունները կառավարելու հնարավորություն,
- Մեծ ֆայլեր մինչև 64 ՄԲ ուղարկելու ունակություն
- Ստուգվող նմուշի վարքի մասին հաշվետվության տրամադրման գործառելիության առկայություն, որում կտրամադրի դիտարկված նմուշի վարքի հակիրճ նկարագրությունը:

Ֆայլի մասին հաշվետվությունը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները.

- Ֆայլը ուղարկող համակարգչի անունը
- ֆայլը ուղարկած համակարգչում օգտատիրոջ նշումը
- Ֆայլի անվանումը և դրա ամբողջական ուղին ուղարկողի ֆայլային համակարգում.
- Ֆայլի չափը:
- Ֆայլի կատեգորիա (Ֆայլի տեսակը):
- Պարամետրերի ընկույցում առկայությունը. վիճակը և կարգավիճակ.
- Ստուգված նմուշներին բանձնված նարգավորման կատեգորիայի առկայություն, որը ցուցադրվում է կառավարման կենտրոնի վահանակում կամ նմուշի վերաբերյալ զեկույցում.
- Վարակված չէ. Հայտնաբերման մոդուլները չեն նշում նմուշը որպես վնասակար:
- Կասկածելի - Հայտնաբերման մոդուլը Ֆայլի վարքը սահմանում է որպես կասկածելի, բայց ոչ վնասակար:

	• Վնասակար - Ֆայլի պահվածքը համարվում է վնասակար: **Հակավիրուսային բազաների թարմացման նկատմամբ պահանջները** Թարմացվող հակավիրուսային տվյալների բազաները պետք է ապահովեն հետևյալ գործառնական հնարավորությունը. • իրականացրել է թարմացումների հայելի ստեղծելու հնարավորությունը տրաֆիկի խնայողության համար • թարմացումների հայելի կարելի է ստեղծել ցանկացած ԱՀ-ում անկախ օգտագործվող Windows / Linux օպերացիոն համակարգից, ներառյալ վերջային կայանը 'օգտագործելով ԱՎ-ի հաճախորդը' թարմացումների առնվազն երկու բաշխման ուղիների պարտադիր առկայությամբ (HTTP և SMB) 'հայելին ակտիվացնելու համար: լրացուցիչ մոդուլների տեղադրում չպետք է պահանջվի ինչպես սերվերի վրա, այնպես էլ աշխատանքային կայանի վրա. • Թարմացումների տեսակները. Վիրուսի սիգնատուրայի տվյալների բազաների թարմացումը, ծրագրային բաղադրիչների թարմացում, միջուկի թարմացումը. • Հայելիի թարմացման փաթեթները կարելի է ներբեռնել երկու եղանակով ' օգտագործելով HTTP արձանագրությունը (առաջարկվում է) և օգտագործելով ընդհանուր ցանցային սկավառակ (SMB); • թարմացումները կարող են տարածվել տեղեկատվության էլեկտրոնային կրիչների վրա (FDD\ CD\DVD\ USB-drive); •իրականացվում է թարմացումների ամբողջականության ու իսկության ստուգում էլեկտրոնային թվային ստորագրության միջոցներով: **Տեխնիկական աջակցության պահանջներ** Հակավիրուսային ծրագրային ապահովման տեխնիկական աջակցությունը պետք է. տրամադրվի արտադրողի սերտիֆիկացված մասնագետների կողմից ռուսերեն լեզվով ամբողջ Ռուսաստանի Դաշնության շուրջօրյա առանց արձակուրդի և հանգստյան օրերի (24x7) էլեկտրոնային փոստով և ինտերնետով, ինչպես նաև հեռախոսով • Արտադրողի Web-կայքը պետք է լինի ռուսերեն, ունենա տեխնիկական աջանցության հատուկ բաժին, համալրվող գիտելիքների բազա և ռուսալեզու ֆորում: 100 համակարգչի համար				

* Ծառայության ժամկետը չի կարող ավել լինել, քան ա.թ. դեկտեմբերի 25-ը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

---------- Ը. Նաֆարյան
(ստորագրություն) Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

---------- Ա. Բաղդասարյան
(ստորագրություն) Կ.Տ.

«11» «04» 2022թ. **Հավելված N 2**
կնքված
թիվ ՀՀԿԳՄՆՄԱԾՁԲ-22/32 գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Չափա-բաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Ծառայության Դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ.-ին, ըստ ամիսների, այդ թվում*												
			Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Ընդամենը
1	48761100/1	հակավիրուսային համակարգչային ծրագրային փաթեթներ	-	-	-	975000	975000	975000	975000	975000	975000	975000	975000	975000	975000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

---------- Գ. Սաֆարյան
(անուն, ազգանուն)
Ս.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

---------- Ա. Բաղդասարյան
(անուն, ազգանուն)
Ս.Տ.